ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Մարինա Կարենի Գալստյանի «ՀՀ երիտասարդների սոցիալական հարմարման պրակտիկաները հետպատերազմյան հայաստանում» թեմայով, ներկայացված ԻԲ 00.01 - «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

1. **Ատենախոսության թեմայի արդիականությունը**

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է հետպատերազմական շրջանին հատուկ ընթացիկ զարգացումներում առանձնապես զգայուն սոցիալական խմբերից մեկի՝ հայաստանյան երիտասարդության, հարմարման հիմնախնդրի և դրա հետ փոխկապված տարբեր ասպեկտների վերհանմամբ և բազմակողմանի վերլուծությամբ: Հետազոտությունը բազմաչափ վիճակագրական տվյալներ է պարունակում հետպատերազմական շրջանում հայ երիտասարդության ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական, մշակութային, քաղաքական և քաղաքացիական բնութագրիչների վերաբերյալ: Աշխատանքում ներկայացված համապարփակ վերլուծությունը նշանակալից նյութ է առաջարկում ոչ միայն երիտասարդների հարմարման հիմնախնդրի խորքային ուսումնասիրության, այլ նաև ընդհանուր հայաստանյան հասարակությանը բնորոշ ադրի ռիսկերի և առաջնահերթությունների, սոցիալականացման գերիշխող մոդելների և իրականացվող քաղաքականությունների վերաբերյալ:

2. **Հետազոտության նպատակը և խնդիրները**

1. Ատենախոսության նպատակն է դուրս բերել ՀՀ երիտասարդների սոցիալական հարմարման պրակտիկաները հետպատերազմյան իրականությունում: Հիշյալ նպատակից բխող խնդիրների թվում սահմանվել է հետպատերազմյան իրականությունում ՀՀ երիտասարդների սոցիալական հարմարման գործընթացների էության և բովանդակության նկարագրությունը, երիտասարդների սոցիալական հարմարման վրա ազդող հիմնական գործոնների

ազդեցության վերհանումը, նախապատերազմյան և հետպատերազմյան Հայաստանում երիտասարդների հիմնական բնութագրիչների համեմատումը, հետպատերազմյան Հայաստանում երիտասարդների սոցիալական հարմարման պրակտիկաների նկարագրությունը, երիտասարդների անկախությունը և սոցիալական հարմարման մակարդակը գնահատող չափման համալիր մոդելի մշակումը և ըստ այդ մոդելի երիտասարդների և հարմարման պրակտիկաների տիպաբանության առաջարկումը, հետպատերազմյան պայմաններում երիտասարդների սոցիալական հարմարման դժվարությունների, ռիսկերի, մարտահրավերների վերհանումը, ինչպես նաև հետազոտության արդյունքների հիման վրա երիտասարդներին ուղղված քաղաքականության մշակման առաջարկությունների ներկայացումը:

3. **Հետազոտությունում ստացված արդյունքները և ատենախոսության գիտական նորույթը**

- Ատենախոսության հիմնական գիտական նորույթը Հայաստանում երիտասարդների հիմնական բնութագրիչների և անկախության առանձնահատկությունների, ինչպես նաև սոցիալական հարմարման պրակտիկաների առանձնահատկությունների դուրսբերումն է սոցիալ-տնտեսական, սոցիալ-քաղաքական և սոցիալ-մշակութային ոլորտների համատեքստում: Ի թիվս ատենախոսությամբ դուրս բերված գիտական նորույթների վեր են հանվել հետպատերազմյան Հայաստանում երիտասարդների սոցիալական հարմարման պրակտիկաները, մշակվել է երիտասարդների անկախության չափման ցուցիչների համակարգ՝ երիտասարդների անկախության համաթիվ (ԵԱՀ/YII) և վեր է հանել ԵԱՀ կիրառման հուսալիությունը, ճանաչողական և կիրառական հնարավորությունները:

  Ի լրումն, երիտասարդների անկախության համաթվի չափման մեթոդաբանության և սոցիալական հարմարման պրակտիկաների փոխառնչության վերլուծության միջոցով վերհանվել և մշակվել է հայաստանյան երիտասարդության տիպաբանությունը:

Մասնավորապես, հիմնավորվել է, որ սոցիալական հարմարման վրա ազդող գործոններից ամենանշանակալին երիտասարդության անկախության գործոնն է, ներկայացվել են երիտասարդների հարմարման գործընթացների, այդ թվում՝ միգրացիոն միտումների վերաբերյալ կանխատեսումներ, որոնք թույլ են տալիս կանխորոշել հայաստանյան հասարակության ժողովրդագրական և այլ փոխակերպումները:

4. **Ատենախոսության արդյունքների գործնական և գիտական նշանակությունը**

Սույն հետազոտությունը կարող է հիմք հանդիսանալ երիտասարդության սոցիոլոգիայի ուսումնասիրման տիրույթի ընդարձակման և դրանում նոր հետազոտական նոր ցուցիչների ներմուծման համար: Հետազոտության վերլուծությունը, եզրակացությունները կարող են լայնորեն կիրառվել ոլորտին վերաբերվող արդի գիտական հետազոտություններում, հոդվածներում և այլ գիտական աշխատանքերում:

Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել կրթական գործընթացներում, ծառայել որպես օժանդակ նյութեր դասախոսությունների և սեմինարների անցկացման համա: Հետազտության արդյունքները կարևոր նյութ կարող են ապահովել հարմարման սոցիոլոգիայի, երիտասարդության սոցիոլոգիայի կրթական ծրագրերի պատրաստման տեսանկյունից:

Հետազոտության արդյունքները կարող են նպաստել երիտասարդության սոցիոլոգիայի զարգացմանը և այդ բնագավառում գիտական և գործնական մշակումների աճին: Հետազոտության արդյունքները օգտակար կլինեն հանրային քաղաքականության մշակման, մարդաբանության, մշակութաբանության, ժողովրդագրության և այլ ոլորտի մասնագետների պատրաստման գործում:

Ատենախոսության շրջանակներում մշակվել են Հայաստանում երիտասարդներին ուղղված պետական քաղաքականության միջոցառումների առաջարկներ, մեխանիզմներ՝ ուղղված երիտասարդների խոցելի խմբերին և խոցելի ոլորտներին: Ուսումնասիրության արդյունքներն օգտակար կլինեն գործող մասնագետների համար, ովքեր աշխատում են երիտասարդների հետ,

հետաքրքրված են երիտասարդների խնդիրներով, ինչպես նաև այն մասնագետների համար, ովքեր զբաղվում են խոցելի խմբերի ներկայացուցիչների խնդիրներով՝ հետպատերազմյան պայմաններում պատերազմի մասնակիցների բնականոն հարմարեցումն ապահովելու նպատակով:

Հետազոտության արդյունքները կարող են հիմք հանդիսանալ Հայաստանում և հետպատերազմյան երկրներում երիտասարդության ոլորտի հանրային քաղաքականության մշակման և իրականացվող քաղաքականությունների արդյունավետության գնահատման համար: Այն կարող է հիմք ապահովել երիտասարդության ոլորտի դերակատարների համար՝ երիտասարդների հետ աշխատանքի նախագծման հարցում:

5. Ատենախոսության կառուցվածքը և ծավալը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, տասնմեկ ենթագլխից, եզրակացությունից և գրականության ցանկից: Ատենախոսության տեքստը շարադրված է 166 էջերի վրա: Ներածության մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել է հետազոտության թեմայի ուսումնասիրվածության աստիճանը, ձևակերպվել են հետազոտության նպատակն ու խնդիրները և ատենախոսության հիմնական վարկածը, ամփոփվել են ատենախոսության մեթոդաբանական հիմքերը, ներկայացվել են հետազոտության գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հիմնավորվել է ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլխում ներկայացված են հետպատերազմական հասարակությունների ուսումնասիրման սոցիոլոգիական մոտեցումները, հետպատերազմական հասարակույթունների համատեքստում առանձնացնող գլխավոր հիմնախնդիրները ու դրանց հիմքում ընկած գործոնները, ինչպես նաև նման հասարակություններում երիտասարդների շրջանում տարածված դերերը, ընկալումները ու սոցիալականացման առաձնահատկությունները:

Ատենախոսության երկրորդ գլխում վերլուծված են երիտասարդության սոցիոլոգիայի տեսական կառուցվածքը: Այս շրջանակներում առաջ են քաշվել

«երիտասարդություն» հասկացության հայեցակարգման հիմնական մոտեցումները և դրանց կառուցվածքային տարրերը, ինչպես նաև երիտասարդության հիմնախնդիրներին վերաբերող հետազոտական մոտեցումները:

Ատենախոսության երրորդ գլուխը նվիրված է «սոցիալական հարմարում» հասկացության սահմանմանը, վերջինիս շուրջ մշակված տիպաբանության տեսական հիմքերի վերլուծությանը, ինչպես նաև սոցիալական հարմարմանն ուղղված հետազոտության մեթոդաբանական հիմքերին և հիմնախնդիրներին:

Ատենախոսության չորրորդ գլխում ամփոփվում են հետպատերազմական Հայաստանում նկատվող երիտասարդների հարմարման պրակտիկաները սոցիալ-տնտեսական, քաղաքական-քաղաքացիական, մշակութային ոլորտների համատեքստում:

«Եզրակացություն» բաժնում հեղինակը ներկայացրել է ատենախոսության հիմնական արդյունքները, առանձնացրել է երիտասարդության անկախության ցուցանիշի տարբեր ասպեկտների ուսումնասիրությամբ առանձնացված վերլուծական տվյալները:

Դուրս է բերել հետպատերազմական Հայաստանի երիտասարդության առջև ծառացած հիմնական մարտահրավերները՝ վստահության ճգնաժամից մինչև առողջապահական խնդիրներ:

Բացահայտել է երիտասարդների շրջանում տարածված սոցիալական հարմարման պրակտիկաների ներքո ենթադրվող հիմնական վարքային մոդելները:

Ցույց է տվել երիտասարդների սոցիալական հարմարման պրակտիկաների դաշտում առկա մի շարք գործոններ, որոնք նշանակալի ազդեցություն ունեն հետպատերազմյան Հայաստանի առկա մարտահրավերներին արձագանքելու հարցում:

Դուրս է բերել սոցիալական հարմարման և անկախության փոխառնչություններով պայմանավորված հայաստանյան երիտասարդների տիպաբանությունը:

Վերլուծական հիշյալ եզրահանգումների և գիտական մշակումների հիման վրա հեղինակն առաջ է քաշել երիտասարդներին ուղղված պետական քաղաքականության մի շարք առաջարկներ:

6. Դիտողություններ և առաջարկություններ ատենախոսության վերաբերյալ

Ներկայացված ատենախոսությունը զերծ չէ թերություններից, որոնցից կցանկանայի նշել հետևյալները.

1. Վերլուծության բաժնում ոչ ֆորմալ դասընթացներում հայաստանյան երիտասարդների մասնակցության վերաբերյալ նշվում է, որ ոչ ֆորմալ դասընթացներին մասնակցելու պրակտիկան՝ որպես աշխատաշուկա մուտք գործելու միջոց կարելի է ռիտուալիզմ (*ծիսակատարություն*) համարել: Այս եզրահանգումը հիմնվում է ձեռք բերված հետազոտական տվյալների վրա, որոնց համաձայն ոչ ֆորմալ դասընթացներին մասնակցելը չի նպաստում աշխատաշուկայում ներգրավվելուն: Այդուհանդերձ, նկատենք, որ մերտոնյան տիպաբանության համաձայն (որը պատշաճորեն հեղինակը նկարագրել է տեսական բաժնում) ռիտուալիստական վարքագծի մասին կարող ենք խոսել այն պայմաններում, երբ հասարակայնորեն ընդունված նպատակի մերժումը ուղեկցվում է հասարակայնորեն ընդունելի միջոցների կիրառմամբ:

   Հետևաբար, տվյալ վարքը նպատակի սահմանման առումով դժվար է ռիտուալիստական համարել, քանի որ երիտասարդության շրջանում աշխատաշուկայում ներգրավվելը հասարակայնորեն ընդունելի վարքագիծ է համարվում:

   Ուստի, տեսական դրույթների տեսանկյունից արդյո՞ք առավել համահունչ չէր լինի հարմարման նման եղանակը վերագրել նորարարական տիպի վարքաձևին, որտեղ նպատակի ընդունումը զուգակցվում է ընդունված միջոցների մերժման հետ:

   1.1 Հարմարման ռիտուալիստական վարքագծի համատեքստում առաջ է քաշվում միկրոռազմավարություններ եզրույթը, սակայն թե՛ տեսական գլուխներում, թե՛ հասկացությունների սահմանման բաժնում վերջինիս շուրջ բացատրություններ չեն հանդիպում: Ըստ այդմ, հարց է առաջանում ի՞նչ պրակտիկաներ են ենթադրվում տվյալ եզրույթի ներքո:

2. Ի թիվս երիտասարդների հարմարման պրակտիկաների, հեղինակը հիմնվելով Ռ.Մերտոնի տիպաբանության վրա, առաջարկում է «թվային նահանջ»

վարքային մոդելը, որի ներքո նշում է սոցիալական մեդիայում շփման կրճատման միտվածքի մասին (մասնավորապես 18-19տ. երիտասարդների պարագայում): Այսպիսով, տպավորություն է ստեղծվում, որ սոցիալական մեդիայի համատեքստում հարմարման այս ձևի տեղայնացումը առավելապես պայմանական բնույթ է կրում, քանի որ տվյալ տիպի առանձնացման համար աշխատանքում բավարար տեսական հիմնավորումներ նախապես չեն առաջարկվում, մյուս կողմից հարմարման այս ձևի նկարագրությունից դուրս է մնում նպատակ-միջոց հարաբերումը հասարակական համատեքստի նկատմամբ, ինչն էական նշանակություն ունի Ռ.Մերտոնի տիպաբանությունում:

3. Հետազոտության որոշ հատվածներում կիրառվում է *գենդեր*, որոշ հատվածներում *սեռ* հասկացությունը: Երբեմն դրանք հանդիպում են մեկ նախադասության շրջանակներում՝ որպես հոմանիշներ (էջ՝ 159): Բանն այն է, որ տեսական բաժնում երիտասարդական կյանքի գենդերային ասպեկտները քննարկելիս հեղինակն օգտվում է Մ.Սիսլիկի և Դ.Սիմփսոնի հետազոտությանից, որտեղ գենդեր հասկացությունը նկարագրվում է ֆեմինիստական և հակառասիստական մոտեցումների շրջանակներում՝ որպես *հասարակական կառուցվածքներով պայմանավորված կանանց և փոքրամասնությունների անշահեկան դիրք*: Ուստի, հաշվի առնելով, որ «գենդեր» հասկացության ֆեմինիստական ըմբռնումը սկզբունքորեն սահմանազատում է այն «սեռ» հասկացությունից, հարց է առաջանում.

- Նման տեսական նախադրյալների պարագայում, ո՞րքանով է արդարացված գենդեր և սեռ հասկացությունների նույնացումը:

4. Հետազոտության խնդիրներից մեկը ենթադրում է նախապատերազմյան և հետպատերազմյան Հայաստանում երիտասարդների հիմնական բնութագրիչների համեմատումը: Վերլուծական բաժնում իսկապես համեմատվում են պատերազմին նախորդող որոշ տարիների (հիմնականում 2017-2020թթ. Տարիների կտրվածքով) և պատերազմին հաջորդած վիճակագրությունները: Այդուհանդերձ, հետազոտությունը կշահեր, եթե տվյալ համեմատությունը հիմնված լիներ վիճակագրությունների համադրման

առավել համակարգված մոդելի վրա: Մինչդեռ, տպավորություն է ստեղծվում, որ երիտասարդությանը բնութագրող վիճակագրությունների համեմատումը աշխատանքում կազմակերպված է ընտրողական տրամաբանությամբ:

Դիցուք գործազրկության վերաբերյալ համեմատվել է 2019-2021 թթ.վիճակագրությունները:

Առողջապահական վիճակի և ծխախոտաօգոտագործման վերաբերյալ հետպատերազմական վիճակագրությունը համեմատվել է 2016թ.-ի վիճակագրության հետ:

Քաղաքական և քաղաքացիական մասնակցության դեպքում 2018-2019թթ.-վիճակագրության հետ:

4.1. Մյուս կողմից, աշխատանքի տեսական ուղղվածությունից երևում է, որ հետպատերազմական իրականությունը աշխատանքում չի դիտարկում զուտ ժամանակագրական տեսանկյունից, այլ իմաստավորում է որպես սոցիալ-քաղաքական, սոցիալ-տնտեսական, սոցիալ-մշակութային առանձնահատուկ փոխակերպումների և ռիսկերի ներքո ձևավորվող որոշակի կարգ: Զուգահեռաբար, համեմատական վերլուծությունից տպավորություն է ստեղծվում, որ նախապատերազմական Հայաստանի մասին խոսելով, հեղինակը չի ելնում հայեցակարգային նման հիմքերից և նախապատերազմական իրականության դեպքում օգտվում է դրա զուտ ժամանակագրային նշանակությունից, ինչ իր հերթին թույլ է տալիս մտածել հիշյալ համեմատության հարցում տեսամեթոդական հիմքերի մշակվածության խնդիրների մասին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները չեն նվազեցնում ատենախոսության արժանիքներն ու ստացված արդյունքները: Մարինա Կարենի Գալստյանի «ՀՀ երիտասարդների սոցիալական հարմարման պրակտիկաները հետպատերազմյան հայաստանում» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն կատարած ավարտուն հետազոտական աշխատանք է, որում լուծված են գիտական կարևոր նշանակություն ունեցող

խնդիրներ: Ատենախոսությունում օգտագործված տեսական մոտեցումները և գործնական առաջարկությունները, ինչպես նաև ստացված արդյունքները, գիտականորեն հիմնավորված են և ընդունելի:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտության բովանդակությանը և ընդգրկում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները: Ատենախոսությունը և սեղմագիրը շարադրված են հստակ և ընկալելի ոճով, դրանց ձևավորումը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են ինչպես տեղային, այնպես էլ միջազգային գիտական ամսագրերում հեղինակի հրապարակած 12 (տասներկու) հոդվածներում: Սեղմագիրը և տպագրված աշխատանքները լիովին արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Հաշվի առնելով շարադրվածը՝ գտնում եմ, որ Մարինա Կարենի Գալստյանի «ՀՀ երիտասարդների սոցիալական հարմարման պրակտիկաները հետպատերազմյան հայաստանում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգին և ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է ԻԲ 00.01 - «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու,
ԵՊՀ սոցիոլոգիայի տեսության և պատմության ամբիոնի ասիստենտ

Գ.Կ.Թումանյան

Պարոն Գ.Կ.Թումանյանի ստորագրության
իսկությունը հաստատում եմ.

20 սեպտեմբերի 2024 թ.